## ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԵՎ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
## N ՇՀԾՁԲ-ԱԻՆ-17-1-15/3-50-21

ք. Երևան

<< 18 >> ապրիլի 2017թ.

ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարությունը, ի դեմս աշխատակազմի ղեկավար Գ. Հայրապետյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետև` Պատվիրատու), մի կողմից, և «Մ-ԲԻ-Ռ» ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Վ. Բաղդասարյանի (այսուհետև` Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

### 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է տրանսպորտային միջոցների տեխնիկական սպասարկման և վերանորոգման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետև` Ծառայություն)` համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

### 2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի`

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող Ծառայության ընթացքը և որակը` առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է սույն պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող Ծառայություն.

ա) Չընդունել Ծառայությունը` իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի Ծառայությունը սույն պայմանագրին համապատասխանող Ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել սույն պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել սույն պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է սույն պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե`

ա) մատուցված Ծառայությունը չի համապատասխանում սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է Ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է`

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված Ծառայության արդյունքը, իսկ Ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում` այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում` նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի`

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է`

2.4.1 Սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել Ծառայության մատուցումը` ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Սույն պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Սույն պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

### 3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ, իսկ պայմանագրի արդյունքը

Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև սույն պայմանագրով նախատեսված Ծառայության մատուցման ավարտի օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է ներկայացնում մատուցված Ծառայության մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության երկու օրինակ (Հավելված N 3) և պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (Հավելված N 3.1):

3.2 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատուցված Ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրություն չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար սույն պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է սույն պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից եռօրյա ժամկետում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Ծառայությունը չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.4 Եթե Պատվիրատուն սույն պայմանագրի 3.3 կետով սահմանված ժամկետում չի ընդունում պայմանագրի արդյունքը կամ չի մերժում, ապա այն համարվում է ընդունված և սույն պայմանագրի 3.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կատարողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

## 4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա Ծառայության առավելագույն ընդհանուր գինը կազմում է **5 055 000 (հինգ միլիոն հիսունհինգ հազար)** ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած Ծառայության դիմաց վճարում է անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ սույն պայմանագրի N 2 հավելվածով սահմանված վճարման ժամանակացույցով նախատեսված ամսում (եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո, ապա վճարումն իրականացվում է 20 բանկային օրվա ընթացքում), բայց ոչ ավելի տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից: Եթե ընդունված Ծառայության դիմաց վճարելու համար վճարման ժամանակացույցով նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումը, սույն կետի պայմաններով, իրականացվում է այն ամսում, որում դրամական միջոցները նախատեսված են, սակայն ոչ ուշ քան 20.12.2017թ.:

## 5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում Ծառայության մատուցման՝ սույն պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Սույն պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ սույն պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.3 Սույն պայմանագրով նախատեսված Ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված Ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են Ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

## 6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է

սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման պայմանագրի կատարմամբ Պատվիրատուի ստացածով:

7.3 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:

Սույն պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

Արգելվում է սույն պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող Ծառայության ծավալների կամ ձեռք բերվող Ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման դեպքերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.4 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև սույն պայմանագրով այդ ժամկետը լրանալը պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ՝ Պատվիրատուի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով:

7.5 Սույն պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողությունները) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Սույն պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.6 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն, «Ինտերնետով հրապարակային և անհատական ծանուցման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն, ուղարկում է Կատարողի պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեով և միաժամանակ նույն օրը հրապարակում է www.gnumner.am հասցեով ինտերնետային կայքում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետում նշված կայքում հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.7 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.8 Սույն պայմանագիրը կազմված է ____ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.9 Սույն պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած` հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.10 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

## 8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

ՀՀ ԱԻՆ
ք. Երևան,Դավիթաշեն 4,Ա.Միկոյանի փող. 109/8
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011400083
ՀՎՀՀ 00153247
Աշխատակազմի ղեկավար`

_______________ Գ. Հայրապետյան
/ստորագրություն/

Կ.Տ.

**ԿԱՏԱՐՈՂ**

«Մ-Բի-Ռ» ՍՊԸ
ք. Երևան, Մյասնիկյան 22/4
«Ակբա-Կրեդիտ Ագրիկոլ բանկ» ՓԲԸ
Հ/Հ 220083335012000
ՀՎՀՀ 08417829
Տնօրեն`

_______________ Կ. Բաղդասարյան
/ստորագրություն/

Կ.Տ.

Հավելված 1
<< 18 >> ապրիլի 2017թ. կնքված
N ՇՀԾՁԲ-ԱԻՆ-17-1-15/3-50-21 ծածկագրով գնման պայմանագրի

# ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԵՎ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ-ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

**Ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման կայաններից պահանջվող տեխնիկական և կազմակերպչական պահանջներ**

**Տեխ. սպասարկման կայանը պետք է ունենա ստորև նշված նվազագույն հնարավորությունները որակով և ժամանակին տեխ. սպասարկում իրականացնելու համար**

1. Պետք է ապահովված լինի փակ և պահպանվող տարածքով՝ պահակային ծառայության կողմից 24 ժամ հսկողություն իրականացվող մինչև 20 և ավելի ավտոմեքենայի համար:
2. Դիտափոս
3. Տեխսպասարկման կայանը պետք է հագեցած լինի առնվազն 1 ամբարձիչներով՝մինիմում երեք տոննա բարձրացնելու կարողությամբ:
4. Դողերի քանդման հավաքման և հավասարակշռման ստենդ
5. Անվաբացքի կարգավորման ստենդ
6. Ինժեկտորի լվացման և կարգավորման ստենդ
7. Մեղմիչների ստուգման ստենդ
8. Լուսարձակների կարգավորման ստենդ
9. Արգելակների ստուգման ստենդ
10. Ավտոէվակուատոր նվազագույնը 3.5տ բեռնատարողությամբ, որը կանչը ստանալուց հետո 30 րոպեի ընթացքում կարող է դուրս գալ դեպի վթարի (խափանման) վայր ՀՀ ողջ տարածքում
11. Կահավորված լինի անհրաժեշտ սարքավորումներով, ունենա ծրագրեր և տեխնիկական գրականություն նշված մակնիշի ավտոմեքենաների ախտորոշման համար:
12. Ունենա էլեկտրական բնույթի խափանումները վերացնելու հնարավորություն
13. Ախտորոշման/դիագնոստիկ սարք
14. Արտանետված CO գազի ստուգման ստենդի առկայություն
15. Կատարի շարժիչի և նրա համակարգերի, ուժային և ղեկավարման համակարգերի ընթացային մասի և թափքի ինչպես ընթացիկ այնպես էլ կապիտալ վերանորոգման աշխատանքներ
16. Կատարվող ծառայությունների վրա լինի ինժեներական վերահսկողություն
17. Բոլոր ծառայությունները պետք է մատուցվեն նույն հասցեում՝ Երևան քաղաքի վարչական տարածքում
18. Պահեստամասերը պետք է լինեն նոր և չօգտագործված, կատարողը պարտավոր է SU-2 ի ժամանակ օգտագործել տվյալ ավտոմեքենայի արտադրող ընկերության կողմից արտադրված կամ նրա երաշխավորված այլ արտադրության պահեստամասեր և քսայուղեր՝ ինչպես նաև Պատվիրատուի պահանջով տրամադրել դրանց ծեռքբերումը կամ ներմուծումը հավաստող փաստաթղթի պատճենը:

**Երաշխիքներ**
**Ծառայությունների համար-6 ամիս**
**Պահեստամասերի համար-12 ամիս**
**Ռետինե դետալների համար-6 ամիս**

**Իրականացվելիք նորոգումների և տեխնիկական սպասարկումների ընթացակարգի համառոտ նկարագիրը**

1. Ավտոմեքենայի անհրաժեշտ նորոգման և տեխնիկական սպասարկման համար Կատարողը պարտավոր է պատվիրատուի նշված ժամկետում և պահանջով ընդունել ավտոմեքենան SU կայան և անմիջապես իրականացնել ախտորոշման, անհրաժեշտ քանդման, պաամոնտաժման, գնման և գնահատման աշխատանքներ:
2. Յուրաքանչյուր ավտոմեքենայի սպասարկման և նորոգման համար պատվիրատուի պահանջով կատարողի կողմից կազմվում, կնքվում և պատվիրատուին է ներկայացվում նախնական գնման և գնահատման ակտ
3. Յուրաքանչյուր ավտոմեքենայի նորոգման և տեխնիկական սպասարկման աշխատանքները իրականացվում են գնման և գնահատման ակտը պատվիրատուին ներկայացնելուց և վերջինիս համաձայնությունը ստանալուց հետո: Պատվիրատուն իրավունք ունի իր հայեցողությամբ փոփոխել կատարվելիք աշխատանքների ծավալները:
4. Յուրաքանչյուր ավտոմեքենայի նորոգման և տեխնիկական սպասարկման աշխատանքները իրականացվում են նշված ավտոմեքենայի համար նորոգման և տեխնիկական սպասարկման աշխատատարության ժամկետներին և նորմերին համապատասխան:
5. Յուրաքանչյուր ավտոմեքենայի նորոգման և տեխնիկական սպասարկման աշխատատարության ժամկետները կարող են փոփոխվել միայն պատվիրատուի համաձայնությամբ:

**Ծառայության մատուցումը**

Կատարողը պարտավոր է Պատվիրատուի պահանջով տրամադրել տեղեկանք՝ Պատվիրատուի տրանսպորտային

միջոցը Կատարողի տեխսպասարկման կայան ներկայացնելու օրվա և ժամի մասին:
Ծառայությունները պետք է մատուցվեն Պատվիրատուի տրանսպորտային միջոցը Կատարողի տեխսպասարկման կայանում գրանցվելու օրվանից հաշված մեկ աշխատանքային օրվա ընթացքում առանց պահեստամասերի փոխարինման ծառայությունների դեպքում և երեք աշխատանքային օրվա ընթացքում պահեստամասերի փոխարինումով ծառայությունների դեպքում: Առանձին դեպքերում Պատվիրատուի համաձայնությամբ կարող է սահմանվել ծառայությունների մատուցման այլ ժամկետ:
**Ծառայության մատուցումն իրականացվում է պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից հաշված միջև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը ըստ Պատվիրատուի պահանջի: Ծառայության մատուցումը պետք է իրականացվի կնքված հավելված 1.1 հաստատված գնի սահմաններում ըստ գնացուցակի:**

| Ծառայության մատուցման ժամկետը | |
|---|---|
| Սկիզբը | Ավարտը |
| **Ապրիլ 2017թ.** | **20 Դեկտեմբեր 2017թ.** |
| | |

* Կատարողը ծառայությունները մատուցում է Երևան քաղաքում:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ ԱԻՆ
ք. Երևան,Դավիթաշեն 4,Ա.Միկոյանի փող. 109/8
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011400083
ՀՎՀՀ 00153247
Աշխատակազմի ղեկավար`

_________________ Գ. Հայրապետյան
/ստորագրություն/

Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ

«Մ-ԲԻ-Ռ» ՍՊԸ
ք. Երևան, Մյասնիկյան 22/4
«Ակբա-Կրեդիտ Ագրիկոլ բանկ» ՓԲԸ
Հ/Հ 220083335012000
ՀՎՀՀ 08417829
Տնօրեն`

_________________ Կ. Բաղդասարյան
/ստորագրություն/

Կ.Տ.

| | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 266 | Հետևի թարթիչ | 2 350 | 2 350 | 2 350 | 2 350 | 2 350 | 2 350 | 2 350 | 2 350 | 2 350 | 2 350 | 2 350 | 2 350 | 2 350 |
| 267 | Առջևակային լապտեր | 6 500 | 6 500 | 6 500 | 6 500 | 6 500 | 6 500 | 6 500 | 6 500 | 6 500 | 6 500 | 6 500 | 6 500 | 6 500 |
| 268 | Խցիկի լապտեր | 4 500 | 4 500 | 4 500 | 4 500 | 4 500 | 4 500 | 4 500 | 4 500 | 4 500 | 4 500 | 4 500 | 4 500 | 4 500 |
| 269 | Խցիկի լապտերի լամպ | 135 | 135 | 135 | 135 | 135 | 135 | 135 | 135 | 135 | 135 | 135 | 135 | 135 |
| 270 | Առջևակային լապտերի լամպ | 135 | 135 | 135 | 135 | 135 | 135 | 135 | 135 | 135 | 135 | 135 | 135 | 135 |
| 271 | Առջևի թարթիչ լապտերի լամպ | 135 | 135 | 135 | 135 | 135 | 135 | 135 | 135 | 135 | 135 | 135 | 135 | 135 |
| 272 | Հետևի թարթիչի լապտերի լամպ | 135 | 135 | 135 | 135 | 135 | 135 | 135 | 135 | 135 | 135 | 135 | 135 | 135 |
| 273 | Հետևի լապտերի լամպ | 135 | 135 | 135 | 135 | 135 | 135 | 135 | 135 | 135 | 135 | 135 | 135 | 135 |
| 274 | Հակամշուշային լապտերի լամպ | 550 | 550 | 550 | 550 | 550 | 550 | 550 | 550 | 550 | 550 | 550 | 550 | 550 |
| 275 | Առջևակային լապտերի լամպ | 135 | 135 | 135 | 135 | 135 | 135 | 135 | 135 | 135 | 135 | 135 | 135 | 135 |
| 276 | Առջևի լապտերի լամպ | 1 150 | 1 150 | 1 150 | 1 150 | 1 150 | 1 150 | 1 150 | 1 150 | 1 150 | 1 150 | 1 150 | 1 150 | 1 150 |
| 277 | Էլեկտրական անջատիչ | 1 580 | 1 580 | 1 580 | 1 580 | 1 580 | 1 580 | 1 580 | 1 580 | 1 580 | 1 580 | 1 580 | 1 580 | 1 580 |
| 278 | Էլեկտրական տվիչ | 2 890 | 2 890 | 2 890 | 2 890 | 2 890 | 2 890 | 2 890 | 2 890 | 2 890 | 2 890 | 2 890 | 2 890 | 2 890 |
| 279 | Տախոմետր | 1 000 | 1 000 | 1 000 | 1 000 | 1 000 | 1 000 | 1 000 | 1 000 | 1 000 | 1 000 | 1 000 | 1 000 | 1 000 |
| 280 | Ապակեմաքրիչ | 1 150 | 1 150 | 1 150 | 1 150 | 1 150 | 1 150 | 1 150 | 1 150 | 1 150 | 1 150 | 1 150 | 1 150 | 1 150 |
| 281 | Բռնման կողպեք | 12 000 | 12 000 | 12 000 | 12 000 | 12 000 | 12 000 | 5 210 | 5 210 | 5 210 | 5 210 | 5 210 | 5 210 | 5 210 |
| 282 | Էլեկտրալարերի գլխավոր խուրձ | 20 000 | 20 000 | 20 000 | 20 000 | 20 000 | 20 000 | 20 000 | 20 000 | 20 000 | 20 000 | 20 000 | 20 000 | 20 000 |
| 283 | Էլեկտրալարերի երկրորդային խուրձ | 8 500 | 8 500 | 8 500 | 8 500 | 8 500 | 8 500 | 8 500 | 8 500 | 8 500 | 8 500 | 8 500 | 8 500 | 8 500 |
| 284 | Վարորդային լարերի խուրձ | 6 400 | 6 400 | 6 400 | 6 400 | 6 400 | 6 400 | 6 400 | 6 400 | 6 400 | 6 400 | 6 400 | 6 400 | 6 400 |
| 285 | Վարորդի մոմի ծածկալ | 2 500 | 2 500 | 8 500 | 8 500 | 2 500 | 2 500 | 6 500 | 6 500 | 6 500 | 6 500 | 6 500 | 6 500 | 6 500 |
| 286 | Վառ փականի | 3 000 | 3 000 | 3 000 | 3 000 | 3 000 | 3 000 | 3 000 | 3 000 | 3 000 | 3 000 | 3 000 | 3 000 | 3 000 |
| 287 | Վառ փականի ճոպան | 2 500 | 2 500 | 2 500 | 2 500 | 2 500 | 2 500 | 100 | 100 | 100 | 100 | 100 | 100 | 100 |
| 288 | Դռան կողպեք | 4 500 | 4 500 | 4 500 | 4 500 | 4 500 | 4 500 | 4 500 | 4 500 | 4 500 | 4 500 | 4 500 | 4 500 | 4 500 |
| 289 | Ազդանշան | 2 560 | 2 560 | 2 560 | 2 560 | 2 560 | 2 560 | 2 560 | 2 560 | 2 560 | 2 560 | 2 560 | 2 560 | 2 560 |
| 290 | Ապակեմաքրիչի բաչոկ | 2 560 | 2 560 | 2 560 | 2 560 | 2 560 | 2 560 | 2 560 | 2 560 | 2 560 | 2 560 | 2 560 | 2 560 | 2 560 |
| 291 | Ապակեմաքրիչի շարժիչ | 1 980 | 1 980 | 1 980 | 1 980 | 1 980 | 1 980 | 1 980 | 1 980 | 1 980 | 1 980 | 1 980 | 1 980 | 1 980 |
| 292 | Դռների կենտրոնական փական | 8 500 | 8 500 | 8 500 | 8 500 | 8 560 | 8 560 | 8 560 | 8 560 | 8 560 | 8 560 | 8 560 | 8 560 | 8 560 |
| 293 | Հայելի կողային | 3 200 | 3 200 | 3 560 | 3 560 | 5 600 | 5 600 | 3 560 | 3 560 | 3 560 | 3 560 | 3 560 | 3 560 | 3 560 |
| 294 | Ազդանշանային համակարգ | 7 500 | 7 500 | 7 500 | 7 500 | 7 500 | 7 500 | 7 500 | 7 500 | 7 500 | 7 500 | 7 500 | 7 500 | 7 500 |
| 295 | Դռան ապակու ամբարձիչ | 2 200 | 2 200 | 8 500 | 8 500 | 8 500 | 8 500 | 8 500 | 8 500 | 8 500 | 8 500 | 8 500 | 8 500 | 8 500 |
| 296 | Դռան ապակու էլեկտրաամբարձիչի շարժիչ | 13 200 | 13 200 | 13 200 | 13 200 | 13 200 | 13 200 | 13 200 | 13 200 | 13 200 | 13 200 | 13 200 | 13 200 | 13 200 |
| 297 | Ներկ, լուծիչ, օժանդակ նյութեր *1 կտորի վերանորոգման համա* | 12 900 | 12 900 | 12 900 | 12 900 | 12 900 | 12 900 | 12 900 | 12 900 | 12 900 | 12 900 | 12 900 | 12 900 | 12 900 |
| | **Ընդամենը ըստ ապրանքներ ըստ մակնիշի** | **1 528 670** | **1 685 070** | **1 863 580** | **2 055 590** | **1 691 290** | **1 675 200** | **2 514 110** | **2 514 110** | **2 234 910** | **2 488 650** | **2 260 030** | **2 704 050** | **2 486 150** |
| | **Ընդամենը ապրանքներ** | | | | | | | **27 701 413** | | | | | | |
| | **Ընդամենը ըստ ապրանք և ծառայություն ըստ չափաբաժնի** | | | | | | | **39 528 233** | | | | | | |

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ ԱԻՆ

ք. Երևան, Դավիթաշեն 4, Ա.Միկոյանի փող. 109/8

ՀՀ ԱԻՆ աշխատակազմի գործառնական վարչություն

Հ/Հ 900011400083

ՀՎՀՀ 00153247

Աշխատակազմի ղեկավար

______ [illegible]

/ստորագրություն/

Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ

Մ-ԲԻ-Ռ ՍՊԸ

ք. Երևան, Միասնիկյան 22/4

Ակբա-Կրեդիտ Ագրիկոլ բանկ ՓԲԸ

Հ/Հ 220083335012000

ՀՎՀՀ 08417829

Տնօրեն՝

______ [illegible]

/ստորագրություն/

Կ.Տ.

Հավելված 2
<<18>> ապրիլի 2017թ. կնքված
N ՇՀԾՁԲ-ԱԻՆ-17-1-15/3-50-21 ծածկագրով գնման պայմանագրի

ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԵՎ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| N | Ծառայության անվանումը | Նախատեսվում է ֆինանսավորել 2017թ.՝ ըստ ամիսների՝ ընդ որում | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը Տարի |
| | ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ ԵՎ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄ | 1 769 250 | 1 769 250 | 1 769 250 | 3 033 000 | 3 033 000 | 3 033 000 | 5 055 000 | 5 055 000 | 5 055 000 | 5 055 000 |

* *Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով:*

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

ՀՀ ԱԻՆ
ք. Երևան,Դավիթաշեն 4,Ա.Միկոյանի փող. 109/8
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011400083
ՀՎՀՀ 00153247
Աշխատակազմի ղեկավար՝

Գ. Հայրապետյան
/ստորագրություն/

Կ.Տ.

**ԿԱՏԱՐՈՂ**

Մ-ԲԻ-Ռ ՍՊԸ
ք. Երևան, Մյասնիկյան 22/4
Ակբա-Կրեդիտ Ագրիկոլ բանկ ՓԲԸ
Հ/Հ 220083335012000
ՀՎՀՀ 08417829
Տնօրեն՝

Վ. Բաղդասարյան
/ստորագրություն/

Կ.Տ.

Հավելված 3
<< 18 >> ապրիլի 2017թ. կնքված
N ՇՀԾՁԲ-ԱԻՆ-17-1-15/3-50-21 ծածկագրով գնման պայմանագրի

Պայմանագրի կողմ

_______________

_______________

գտնվելու վայրը _______________
հհ _______________

_______________

հվհհ _______________

Պատվիրատու

_______________

_______________

գտնվելու վայրը _______________
հհ_______________

_______________

հվհհ_______________

# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
# ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

§ ¦§ ¦ 20 Ã.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ _______________

_______________

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_______________» 20 թ.
Պայմանագրի համարը՝ __________
Պատվիրատուն՝ _______________ ի դեմս
Պայմանագրի կողմը՝ ի դեմս_______________ և
Պայմանագրի կատարման վերաբերյալ «____» «_______________», հիմք ընդունելով նախագծած ներկայացուցչի N եզրակացությունն այն մասին, որ Պայմանագրով նախատեսված՝ «_______________» 20 թ. կազմված՝ գնման հայտը նշված ծառայությունները համապատասխանում են Պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին. Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

| N | Մատուցված ծառայությունների | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | անվանումը | տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը | քանակական ցուցանիշը | | կատարման ժամկետը | | Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/ | Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/ |
| | | | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |

Վերոհիշյալ ծառայությունների մատուցման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց

_______________
ստորագրություն

_______________
ազգանուն, անուն
Կ.Տ.

Ծառայությունն ընդունեց

_______________
ստորագրություն

_______________
ազգանուն, անուն
Կ.Տ.

Հավելված 3.1
<< 18 >> ապրիլի 2017թ. կնքված
N ՇՀԾՁԲ-ԱԻՆ-17-1-15/3-50-21 ծածկագրով գնման պայմանագրի

# ԱԿՏ N
## պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ -------------------------ի (այսուհետ՝ Պատվիրատու) և
(Պատվիրատուի անունը)
------------------------------ի (այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. ------- -ին կնքված N ----------------
(Կատարողի անունը)
գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. ----------- -- -ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

| Ծառայության | | |
|---|---|---|
| Անվանումը | Քանակական ցուցանիշը (փաստացի) | Չափի միավորը |
| | | |
| | | |

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

**Հանձնեց**

________________
ազգանուն, անուն

________________
ստորագրություն

**Ընդունեց**
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

________________
ազգանուն, անուն

________________
ստորագրություն